

Յ. Ա. Գամպյան

ՌԱՖԱՅԵԼ ՊԱՏԿԱՆՅԱՆԻ ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿԸ

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին աւրնթեր Պետական Մատենադարանի արխիվային ֆոնդերը համալրվում և հարստացվում են Սովետական Միության և արտասահմանյան տարբեր վայրերում ապրող հայրենասեր հայերի կողմից ուղարկված արժեքավոր վավերագրերով:

Վերջերս Գահիրեից Կալիպսե և Տիրան Տիրատուրների կողմից Մատենադարանը նվեր ստացավ Գամառ-Քաթիպայի (Ռաֆայել Պատկանյան) Կոմեդիմանվելին (Միքայել Նալբանդյան) ուղղած անթվակիր (հավանական է 1858 թ.) 4 էջից բաղկացած, ձեռագիր անտիպ մի նամակը և նամակի շարունակության մեջ գրած «Մեր այր» վերնագրով բանաստեղծությունը (հետագայում տպվել է «Բռնի պսակ» խորագրով) «Հյուսիսսփայլում» տպագրելու համար:

Հիշյալ նամակով Ռաֆայել Պատկանյանը Միքայել Նալբանդյանին իր դժգոհությունն է հայտնում այն բանի համար, որ ինքը մի քանի ամիս առաջ «Դե Մրուս» վերնագրով մի բանաստեղծություն է ուղարկել «Հյուսիսսփայլում» տպագրելու, որը սակայն չի տպագրվել և չտպագրվելու պատճառների մասին իրեն ոչինչ չեն հայտնել: Կասկածելով, որ հիշյալ բանաստեղծությունը չտպագրելու պատճառը կարող է հանդիսացած լինի հիշյալ բանաստեղծության հակակերական բնույթը կամ թեման, որտեղից վերցնելը, նա անհրաժեշտ է համարում ծանոթացնել իր օգտագործած սկզբնաղբյուրի հետ: Ըր ասելով, 1849 թվականին Աստրախանում եղած ժամանակ այրի մի երիցուհու տանը եղած ձեռագիր նյութերը նայելիս, 1624 թվականին ընդօրինակած մի ձեռագրում ինքը պաաահում է իբր թե «Դե Մրուս»¹ խորագրով հակակերական հայկական ժողովրդական ավանդությանը, որը մշակում և ուղարկում է տպագրության:

Ինչպես հայտնի է, 1858 թվականին Մ. Նալբանդյանը հայ կղերականների և ազգային անարժան գործիչների նկատմամբ մերկացնող հոդվածներ է տպագրում «Հյուսիսսփայլում», որի պատճառով խստացումներ և հալածանքներ է սկսվում Մ. Նալբանդյանի և «Հյուսիսսփայլի» դեմ: Ցենզուրական խստացումներից խուսափելու համար, թվում է թե Ռ. Պատկանյանը «Դե Մրուս» բանաստեղծության սկզբնաղբյուրի մասին Մ. Նալբանդյանին գրած նամակում պատմածը մի հնարանք է, որով ցանկացել է այդ բանաստեղծության հակակերական բովանդակությունը վերագրել ժողովրդին և ինքը խու-

¹ Ռաֆայել Պատկանյանի «Դե Մրուս» բանաստեղծությունը, որը բաղկացած է 114 տողից, ուղղված է հայ կղերի դեմ, որպես հայ ժողովրդի մեջ թշնամություն սերմանողի և նրա ներսում եղած միասնությունը խախտողի: Նշված բանաստեղծության մեջ Դե Մրուսը ներկայացված է դժոխքի ամենանենդավոր դևերից մեկը, որը հոգևորականի ֆարաջա հագած՝ մտնում է հայ ժողովրդի մեջ, օգտվելով նրա կրոնասեր և դյուրահավատ թուլությունից, խառնակիչ, քայրայիչ աշխատանք է տանում և խախտում նրա միասնականությունը:

սափի դրա պատասխանատվությունից: Այդ բոլորից հետո դարձյալ չեն տպագրում Ռ. Պատկանյանի բանաստեղծությունները «Հյուսիսսփայլում»:² Իր բանաստեղծությունները շտպագրելը, ըստ երևույթին, շատ է վշտացրել Ռաֆայել Պատկանյանին: Այդ երևում է նրա 1858 թ. հոկտեմբեր ամսին Մ. Փանյանին գրած մի նամակից, ուր նա բացատրում է, թե ինչու իր «Քաջ Վարդան» պոեմը չի հանձնել «Հյուսիսսփայլին» տպագրելու: Այդ մասին նա գրում է. «Ըն հատկապես այդ օրագրի համար շատ բան էի աշխատել... բայց իմ առաջարկությունքն քաղաքավարությամբ հերքեցին...»³:

Ի դեպ, Մ. Նալբանդյանը Ռ. Պատկանյանի այս և դրանից առաջ գրած նամակներին անդրադարձել է իր «Հիշատակարանի» մեջ, տալով հետևյալ բացատրությունը. «Դարձյալ մի այլ նամակ ստացա պ. Գամառ-Քաթիպայից (Մ. Պետերբուրգից), որ մեղադրում է ինձ, թե ինչու համար նորա ուղարկած մի ոտանավորը չէ ընկել Հյուսիսսփայլի մեջ, և թե ինչու մի դրավոր տեղեկություն չեմ տվել նորա՞ն շտպվելու պատճառի մասին: Պիտի խմանալ, որ ես Հյուսիսսփայլի հրատարակողը չեմ և ոչ նորա գլխավոր աշխատակիցը... իմ անունով ուղարկած, բայց անմիջապես Հյուսիսսփայլի մեջ տպվելու գրվածները ես ուղարկում եմ պ. հրատարակողին, ինչպես պ. Գամառ-Քաթիպայի և մի քանի նոր ոտանավորքը, վերոհիշյալ նամակով ուղարկել էր ինձ, ավելի ոչինչ չեմ կարող անել, իմ ձեռքում ոչինչ չկա»³:

Նկատի ունենալով, որ հիշյալ նամակը կարող է օգտակար լինել Ռ. Պատկանյանի և Միք. Նալբանդյանի փոխհարաբերությունների և գրական գործունեության էջեր լուսաբանելու համար, այն հանձնում ենք տպագրության:

ՄԵԾԱՀԱՐԳՈ ՊԱՐՈՆ ԿՈՄԱ ԷՄՄԱՆՎԵԼ

Ըթն չեմ սխալում՝ յոթը ամիս կլինի, որ ես ուղղել էի Պայծառափայլությանը անվամբ մի ոտանավոր, որո վերնագիրը Դև Մրուս էր և խնդրել էի, որ դուք հոգս տանեք մուծանել այն պատվական թՀյուսիսսփայլ» օրագրի մեջ, որո խմբագրին Դուք աշխատակից եք: Իմ խնդիրը անկատար մնաց, և այդ երկարատև միջոցումն էլ շտպվեցավ վերոհիշյալ ոտանավորն և ոչ Պայծառափայլությունը պետք համարեց պատասխան տալ և մեկնել շրջողունելու շարժառիթն: (Անհայտ չէ պարոնիդ, որ Եվրոպական օրագրիների խմբագրիչը սովորություն ունենալով սխալի դեպքերի ժամանակ նույնիսկ օրագրի միջոցով պատասխանել ում որ հարկն է): Բայց բերանացի հայտնած պատճառը (որո ստուգությանը պատասխանատու չեմ, որովհետև լեհանցի է) Զեր՝ իբր թե՛ հեղինակի շտորագրելն է, եթե օրագիրը միանգամ և միշտ հայտնել է թե շտորագրած գործ կամ շարագրություն մուտք չէ ունենալու յուր մեջ, այդ ժամանակ մասամբ արդար էր դուք: Բայց ոչ լստ ամենայնի. պատճառ՝ կարող է այնպես պատահել, որ միայն հեղինակին հայտնի պատճառներով՝ նա կամենում է կամ թագուցանել ընթերցողներին յուր անունը կամ միայն պարկեշտությամբ չէ ցանկանում հրապարակի մեջ հանդես գալ: Ես այսպես Բայց մի ուրիշ դիպվածք ևս կա, երբ շարագրվի առանց ստորագրողին (այսինքն հեղինակի անունը)՝ կարող է երևի որպես և իդն պարբերական գրքերի մեջ. և այդ էրբ որ հեղինակը անհայտ է միանգամայն: Ինչպես որ Դև Մրուսինը: Գուցե ևս պարտական էի այն անգամ գրել, թե ինչ կերպով բն(կ)ել է այդ ոտանավորը իմ ձեռքը: 1849 թ. ես Աստրախանում էի. մի այրի Երիցունու դարակը քրքրելիս՝ շատ ուրիշ թղթերու հետ այդ ևս բնկավ:

2 Ա. Ի Ն ճ Ի Կ Դ Կ Ե Ն—«Միքայել Նալբանդյանի կյանքի և գործունեության տարեգրություն», Երևան, 1954 թ., էջ 94:

3 Մ Ի Թ Ե Կ Ե Ն Ն Ա Ղ Ե Մ Ե Ն—«Նրկերի լիակատար ժողովածու», հատոր առաջին, Երևան, 1945 թ., էջ 394—395:

ձեռս, Առաջի անգամն ուշք չդարձուցի սորա վրա, բայց ետո տեսա. որ հետաքրքրիչ քան է, մանավանդ շարադրած գուրվ 1624-ին, (հին ձեռագրի մեջ նշանակած էր տարին) կարող է դա ինչ ինչ մեկնել այդ մութ ժամանակվա անցքերեն և ժողովրդի զգացմունքը, Չկարծեմ որ դա մի կծու բան լինի այժմվա մարդոց համար և կասկածելի պարունակություն մը. ընդ հակառակն, մեր հոգևոր հարք պարծենալով կարող են ցույց տալ, թե ինչպես ամեն ժամանակ սիրելի են եղել նոքա յուրյանց ավանդած հոտին-ժողովրդին, Բսկ ինքը Մրուսը՝ առանց երկր-յության, մտացածին անձն է, որ իրոր ինչպես պատմությունիցն մեզ հայտնի է, որ ոչ եղել է, ոչ կա, և ոչ լինելու է. Բայց անձնավորած Մրուսնե՛ր ոչ միայն մեր ազգի մեջ, այլև սմեն ազգի մեջ եղել են, կան և լինելու են. և բարեմիտ մարդիկ նոցա սատանյական դեմքեն դիմակը հանելու երբեք վախեցած չեն. Ուր թույն, անդ և դեղթափ, ասում է ուսումնական, բայց եթե կամենա Պայծառափայլությունը առածիս հաստատությունը խնդրել՝ պետք եղած ժամանակը ես պատրաստ եմ ապացուցանելու թե այն ոտանավորի հին շարադրություն լինելն և թե նորա անվնաս ազգի ընթերցանության համար, և որ գլխավորն է՝ ոչ հակառակ տեղություն և գրաքննության կանոններին:

Անհայտ չէ Պայծառափայլությանդ, որ մի ժամանակ մուսան պահ էր տվել ինձ յուր քնարը, այդ միջոցին պարապո ժամերս նվիրել էի այդ նվագարանին, և ասում են թե այժմ փոքր ինչ հաջողակ եմ թեթև piece-ներում: Ահա իմ թույլ լարերից հանած մի քանի accord-ներ, եթե հավանիք տպեցեք, թե ոչ

В легу бутъ

Գ.Ա.ԴԱՆԻՔ-ՔԱԹԻՊԻԱ

Հայկ. ՍՍԻՒ Պետ. Մատենադարան, արխիվային բաժին, Պաթկանյանների արխիվ, թղթ. № 146, վավ. № 193:

4 Ռ. Պատկանյանի «Դև Մրուս» բանաստեղծությունը առաջին անգամ տպագրվել է «Կուռնեկ Հայոց Աշխարհին» ամսագրի 1862 թվականի 3-րդ համարում, որտեղ հեղինակը ծանոթագրություն է տվել հիշյալ բանաստեղծության նյութը որտեղից վերցնելու մասին, որը զգալի չափով տարբերվում է հիշյալ նամակում տված տեղեկություններից: Անհրաժեշտ ենք համարում մեջ բերել այդ ծանոթագրությունը. «Այս ոտանավորի նախագաղափարը առաջին անգամ կարդացել եմ մի հին ձեռագրի մեջ, եթե չեմ սխալում, 1850 թվականին Թիֆլիզում, բայց թե որի՞ սեփականություն էր այդ ձեռագիրը, իսպառ թռել է մտքես, միայն այսքան կարող եմ ասել, որ այս փոքրիկ ոտանավորը մի այլանդակ տպավորություն արավ վրաս, ըստ որում գրեթե իր սեռումն (հայկական դպրության մեջ) անզույգ էր. մինչև այս օրս ես չկարողացա որոշելու թե, որ տեսակ շարադրությանց վերաբերելի է—երգի՞, ավանգուստի՞ն, պարերգության՞, երգիծաբանության՞, թե՞ մի սովորական բանաստեղծական զառանցման աղատ ամենայն արտաքին դրոշմունք, թե՞ վերջապես մի մարգարեական ներշնչման... Պատվական կարգացողը կարող է միամիտ լինիլ, որ ես թեև փոփոխելով խոսքերը, ոտները և դարձվածները, ի վերա այսու ամենայնի ներքին պարունակությունը, իմաստը անփոփոխ եմ թողել, ես կամավորապես և դիտմամբ անվանեցի սորան «Ազգային ավանդություն», վասնզի այդ որոշումը առավել լայն սահմաններ ունի, քան թե որևէ տեսակը շարադրության»: